



ՐԱՎԱՌՈՒԹՅՈՒՆ



ԴԱՎԻԺ ԳՅՈՒՐՁԻՆՑԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՆՈՐ ԽՈՍՔ ՀԱՅ ԲԱՌԱՐՄԱԿԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Բոլորովին վերջնը Մայր Վթոռ Ս. Էջմիածինը լույս ընծայեց բանասիրական գիտությունների դրվագոր, պյուֆեսոր Պեղիրյանի «Նայերեն շրջասությունների բառարանը», որն անշուշտ նոր խոսք է մեր բառարանագրության մեջ. շրջասությունների բառարանցոր չի եղել մեզանում (որքան մեզ է հայքին, նաև այլոր): Այս աշխագործությունը համահունչ է հայերենագետի նախորդ ուսումնասիրությունների թեմատիկային. մասնագիտական շրջանակներին քաջածանոթ են Պ. Բեղիրյանի «Դարձվածաբարանական բացագրական բառարանը» (1971), «Ժամանակակից հայերենի դարձվածաբարանությունը» (1973), «Ժամանակակից հայերենի ոչ փոխարերական կայուն բառակապակցությունները» (1990) և այլն:

Ի՞նչ է շրջասությունը (լեզվաբանական աշխագործություններում և բառարաններում զորածվում են նաև շրջաբանություն, շրջասույթ գերմինները): Շրջասություններն այն դարձույթներն են, լեզվական միջոցները, որոնք առարկաներն ու երևույթները (նաև զործողությունները) ներկայացնում են պատկերավոր ձևով, նկարագրական եղանակով: Մրանք կապակցություններ են, արդահայտություններ, որոնք առավել արդահայտչական են դարձնում խոսքը: Ասենք, որ Պ. Բեղիրյանն ընդունում է նաև բառ-շրջասությունները, օրինակ՝ շողիկ (նապասպակ), ծուռթաթ կամ բրդող (արջ) և այլն, որոնք, սակայն, սույն բառարանի մեջ ընդգրկելու նպատակ հեղինակը չի ունեցել:

Այնուհետ ընդգրկվել են 1689 շրջասական կապակցություններ, որոնք հեղինակը քաղել է մեծարիվ աղբյուրներից (հայ և օդար հեղինակների գրքեր, Նայասպանի և Սկյուորի մամուլ), ավելի քիչ՝ նաև հեռուստաբեռնությունից ու ռադիոյից:

Կարելի է ասել, որ բառարան է ներմուծվել հիմնականում նոր և նորագոյն շրջանի հայերենի (արևելահայերեն ու արևմտահայերեն) նյութը. նոյնիսկ Ասրբվածանչից ու շարականներից բերված օրինակներն աշխարհաբարով են ներկայացված, այն է՝ որոշակի ընդությամբ: Այլ կերպ չեր է կարող լինել, որովհետև հիշյալ սկզբնաղբյուրները լի են հարկացիս բանասիրեղծական շրջասություններով: Այսպես, օրինակ, շարականներում հանդի-

պում են՝ Աղքիսը անմահութեան (Դիտու), հոգևոր անդաստրան (Մարիամ Ասդվածածին), լուսատրիչը տիեզերաց (առաջաներ), երջանիկ ձառագայթ (Սփենփանոս), տիւսանդղը անեղ գոյին (մարգարեներ) և այլն (որոնք ներկա բառարանում չեն գրանցվել): Բառարանագիրը գրաբար շրջասուրյունները թողել է այլ ուսումնասիրողների:

Բառարանը գիրածանաջրական կարևոր արժեք ունի, և պարահական չէ, որ այն ՀՀ ԿԳ նախարարության կրթական բարեկիրդումների կենտրոնի կողմից երաշխավորվել է իբրև ուսումնական գրականություն: Ընթերցողը (այսի ասվեր «բառարանից օգտվողը», բայց այս բառը միտքումնավոր գրեցինք, քանզի սոյն բառարանը կարելի է ուղղակի էջ առ էջ ընթերցել՝ գեղարվեստական կամ հետաքրքրահարույց գրքի նման) այսպես շատ բան կարող է գրնել: Օրինակ, թե մարդկային պատկերավոր միաձողությամբ ինչպես են անվանվում մայրամաքներ (կանաչ աշխարհանաս, կենգուրուների երկիր, հինգերորդ աշխարհանաս - Ավստրալիա), երկներ (հազար ու մեկ գիշերների երկիր - Երաք), քաղաքներ (նորաձևության մայրաքաղաք - Փարիզ), նշանավոր մարդիկ (ամենայն հայոց բանաստեղծ - Տովի. Թումանյան), կենդանիներ (մարդու լավագույն բարեկամ - շուն), բույսեր (հայկական ժենշեն - լոշպակ) և այլն, և այլն: Վյուպես նաև գործողություններ ցոյց տվող բազմաթիվ շրջասուրյուններ, օրինակ՝ ի վերին Երրուսաղեմ գնալ (մեռնել), զիսին ձյուն դնել (սահմանակել, փարիքն առնել), բերանը կեղուողել (հայիոյել) և այլն:

Նեխնակը շրջասուրյունները սոսկ կողք կողքի չի դնում: Ոչ, մադմանշում է բարբերակներ, ինչպես՝ Աղասի հագուստով /Աղասի ու Եվայի հագուստով/ զգեստով (բոլորովին մերկ), դալիս է համեմատելի միավորներ, ինչպես՝ Աղասի /Եվայի մերկությամբ/ Բազմաթիվ շրջասուրյունների պարագայում նշում է մեկից ավելի իմաստներ, ինչպես՝ հյուսիսային Վենետիկ (1. Ամստերդամ, 2. Պետերբուրգ, 3. Ստոկհոլմ, 4. Բրյուգգե): Բառահողվածներն օժիված են ոճական անհրաժեշտ նշումներով, ինչպես՝ Պառնասի ընդույալ (զրք.) = բանաստեղծ, գրող, երկարեւ եզ (հնց.) = դրակոն, տիեզերքի բիբեռ (բնադր.) = ասպարեզ, վերևարունք դատարկ է (խսկց.) = անխեղ է, աև ջուր (ծող., արևմդ.) = սուրճ, Դայոց Արևելից Կողմանք (պարմ.) = Արցախ և Շուփիք: Իսկ բառարանի վերջում զերեղված առարկայացանի միջոցով «իրար են մողենում» գրքի տարրեր էշերում ափոված նոյնանիշ շրջասուրյունները: Օրինակ՝ հետաքրքրվող ընթերցողը ցանկանում է իմանալ, թե շրջասաբար, պարկերավոր կամ այլաբանորեն ինչպես են անվանում Հայաստան՝ Ասքանազյան երկիր, բիրիսական երկիր / հող, դրախտի երկիր (հնց.), քանգարուաց երկնքի դրակ, թափառող մայրաքաղաքների երկիր, Թորգոնա դրուն / Թորգոնական երկիր, Նոյի երկիր և այլն:

Վսպահ ենք, որ Պ. Բենիքյանի «Հայերեն շրջասուրյունների բառարանը», ընթերցողական լայն շրջանակներում շերմ ընդունելություն գրնելուց զարդ, կենդանություն և անհագործողներին, որոնք թերևս պիտի փորձեն պարզեն, թե, օրինակ, ո՞ր հասկացություններն են հագուստեածներին, որոնք ներկա պարագաները կամ այլաբանորեն ինչպես են անվանում Հայաստան՝ Ասքանազյան շրջասաբար արդահայպվում, և ինչո՞ւ, ինչպիսի ընդհանուրություններ և առանձնահատկություններ կամ արևելահայերենի ու արևմտահայերենի շրջասուրյունների մեջ, որոնք են բուն հայկական, որոնք՝ փոխառյալ շերպերը, ինչպիսի առնչություններ կան

մի կողմից՝ շրջասությունների, մյուս կողմից՝ դարձվածքների (հիդրոմների) ու բաղադրյալ անվանումների միջև և այլն:

Անշուշտ, գրախոսվող բառարանում նկադիվում են նաև թերություններ: Մեր կարծիքով, որոշ շրջասություններ կարելի եր ընդորկել հապորի մեջ, քանի որ բառարանը լիակատար կոչվելու հավակնություն չունի: Օրինակ՝ *տիկին արդարություն* (Էլիզարեա Շվեյցարդ Սելմը), *փոփի արրայադրություն* (Մրայա Քերի), *քառո քաղաք* (Բարու) և այլն:

Մյուս կողմից է բառացանկը կարելի է լրացնել այլ հանրահայր շրջասություններով, օրինակ՝ *Բարի հովիվ, Անարտար զար* (Դիտու Քրիստոս), *Քրիստոսի լծակիցներ* (առաջալներ) և այլն:

Որոշ դեպքերում է այս կամ այն շրջասությանը վրկած բացադրությունը բխում է միայն այդ դեքստրից՝ խոսքաշարից, ու կարող էր այլ մեկնաբանություններ ևս սպանալ կամ է ընդհանրական բնույթ ունենալ. հմնդ. *երգի արքա* (մնձ բանասպենդ), *երգի թագուհի* (Նենրիելա Զոնթազ) և այլն:

Մի շարք դեպքերում լրացուցիչ ոճական նշումների կարիք է զգացվում, ինչպես՝ *քաղաքական կենդանի* (մարդ)՝ հզվադաշտ, ևն *քար* (վանք)՝ ժող., հնց., *հայ մամուլի Էմիլ դր Ժերարդին* (Գրգիոր Արծրունի) հնց. և այլն:

Ակնհայր է, սակայն, մեկ բան. Ամենայն Հայոց Գարեգին Երկրորդ Վեհափառ Հայրապետի հոգածությամբ և ամերիկահայ Լսոն և Արաքսի Զենյանների նյութական միջոցներով լույս աշխարհ է եկել ուշագրավ մի բառարան, որ լուրջ ներդրում է հայերենի դարձվածաբանության և բառարանագրության ասպարեզում: